

մագաղաթ զարնող մոյնքը հակասութեան պէս բան մըն ալ կ'աւելցնէին: Եօթը պորտէն զարնուած անոնց արիւնը կը խաղար այդ առտու: Մեզ հիւսեր էին. հետզհետէ հասնողները զիրար կը հրէին ուս մը տեղ ճարելու համար ձրի ներկայացումէն: Բոլոր այդ փոքրիկ գիւղերուն մէջ ձանձրոյթը պատճառ է, որ տաղաւարները փնտռուին, կիրակիները յարգուին ու բացառիկ հանդիսանքը դառնայ մեծ իրականութիւն, ամբոխները տագնապի մատնող հարց: Օտարականը, աշուղ կամ ոչ՝ բացառիկն է: Ատկէ դուրս կայ գիւղացիներուն հզօր, կենդանի հետաքրքրութիւնը մեծ մրցանքներէ.՝ գօտեմարտութիւն եւ կալի բարքեր, խաղեր, որոնք եղանակի հետ սերտ կապակցութեամբ մը կը մնային պայմանաւոր: Չեմ պատմեր այդ շատ խորունկ, իրաւ պահերը, նիւթէն դուրս նկատելով անոնց շահեկանութիւնը: Ձմեռները, գեղին սրճարանը, իր ետեւի հսկայ ախոռը կը փոխակերպէր բացօթեայ հանդիսավայրի: Ուրիշ վայելքներէ զրկուած ամբոխը հաճոյքով կը կազմէր իր պարը աքլոր գզուրացրողներու շուրջ, բաժնուած հակառակորդ խումբերը աս ու ան աքլորին կուսակից: Աքլորամարտերու յիշատա՞կը հոս: Ո՛վ գիտէ: Երբեմն ժողովրդական բնագոյր, աւելի սուր ու ամուր, քան ժողովրդական խելքը, գիրքերուն բառով, բանականութիւնը կ'ընէ տարօրինակ սեւեռումներ, սրամիտ հարազատութիւն մըն ալ գտնելով անոնց արտայայտութեան մէջ: Մէկը, խաղցուկ Մինասը, որ տասնեօթը պիտակներ կցած էր իր անունին, իւրաքանչիւրին համար պատուակալ դրուագի մը պատմութիւնովը եւ որ չկտրտած չուան չէ ձգած թուրքերուն գեղերը: Դուք կը հասկնաք անոնց այրիներուն մահիճները՝ փսփսաց թեթեւ, բայց բաւական յստակ,՝ հագլի մը կտրատուն արձագանգներուն ընդմէջէն:

– Երկու խոռոզ...

– Ինչ ալ վայլեց,՝ կ'աւելցնէ հոճա Մարուքը,՝ մէկը

հիմա: